Արձանագրություն

ս.թ. փետրվարի 24-ին ժամը 10:00-ին կայացած՝ եկամուտների

վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. Քննարկվեցին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Նախագծերը ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Վ. Միրումյանը:

Նախագծերի վերաբերյալ խորհրդի անդամների կողմից առաջարկություններ չներկայացվեցին:

Որոշվեց հավանություն տալ ներկայացված նախագծերին:

2. Քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակված՝ «Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման և մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում չունեցող անձանց՝ մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախագիծը ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Վ. Միրումյանը:

Խորհրդի անդամներն առաջարկեցին նախագծում հստակեցնել մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու նպատակով օգտվողի անհատական ծածկագիր ստանալու դիմումի մերժման հիմքերը:

Որոշվեց ընդունել ներկայացված առաջարկությունը և հավանություն տալ դրա հիման վրա լրամշակված նախագծին:

Խորհրդի անդամներն ընդունեցին ի գիտություն, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ըստ անհրաժեշտության, կազմակերպելու է մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգից օգտվելու կանոնների ուսուցման դասընթացներ:

3. Քննարկվեցին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակված՝ ՀՀ հարկային օրենսգրքի կիրառությունն ապահովող՝ ՀՀ կառավարության մի շարք որոշումների նախագծեր:

Նախագծերը ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Վ. Միրումյանը:

*Հորիզոնական մոնիտորինգի համակարգի կիրառությանն առնչվող նախագծերի վերաբերյալ.*

«Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Փ. Թադևոսյանն առաջարկեց՝

1) նախագծով սահմանել երաշխիքներ, որ հորիզոնական մոնիտորինգի համաձայնագիր կնքած հարկ վճարողի նկատմամբ հարկային օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցները չեն կիրառվելու բոլոր այն դեպքերում, եթե հարկային մարմինը հորիզոնական մոնիտորինգի համաձայնագրի շրջանակներում հնարավորություն ունի իրական ժամանակում հետևելու հարկ վճարողի գործողություններին և կանխելու օրենսդրության պահանջների խախտումները,

2) սահմանել պատասխանատվություն հարկ վճարողի կողմից ներկայացված դիմումին սահմանված ժամկետում չպատասխանելու համար:

Որոշվեց ընդունել ներկայացված առաջին առաջարկությունը և հավանություն տալ դրա հիման վրա լրամշակված նախագծին:

*«Գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցնելու, պահպանելու և տնօրինելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ.*

Խորհրդի անդամներն առաջարկեցին նախագծում հստակեցնել, թե որն է համարվում հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույք:

Որոշվեց ընդունել ներկայացված առաջարկությունը և հավանություն տալ դրա հիման վրա լրամշակված նախագծին:

4. Խորհրդի նիստի օրակարգում չներառված այլ հարցեր:

- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Հ. Ավագյանն առաջարկեց հարկ վճարողների իրազեկվածության մակարդակը բարելավելու համար պատրաստել տեղեկատվական նյութեր:

Այդ կապակցությամբ, նշվեց, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն արդեն իսկ իր պաշտոնական կայքում հրապարակել է 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական կարգավորումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվական նյութեր, և այդպիսի տեղեկատվական նյութերի հրապարակումն առաջիկայում նույնպես շարունակվելու է:

- Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ Գ. Մակարյանն առաջարկեց հարկ վճարողների իրազեկվածության մակարդակը բարելավելու համար կազմակերպել համատեղ ասուլիսներ:

Այդ կապակցությամբ նշվեց, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն պարբերաբար կազմակերպում է տեղեկատվական բնույթի ասուլիսներ, որոնք նաև լայնորեն լուսաբանվում են զանգվածային լրատվության միջոցներով:

- Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ Գ. Մակարյանն առաջարկեց աշխատանքային քննարկումներ կազմակերպել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի կիրառության ընթացքում առաջացող խնդիրների լուծման նպատակով:

Այդ կապակցությամբ նշվեց, որ հիմնական խնդիրը կապված է սնանկության կառավարիչների ինստիտուտի հետ, և այդ խնդրի լուծման նպատակով առաջիկայում կազմակերպվելու են քննարկումներ, որոնց կարող են մասնակցել նաև շահագրգիռ հասարակական կազմակերպությունները:

- Քննարկվեցին նաև հարկային հաշվառմանը, հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգերին, հարկ վճարողների ու հարկային մարմինների շփումներին վերաբերող այլ հարցեր: